

891.99

4/-31

Nº : 3

"ՓԱՐՈՍ • ՀՐԱՏԱՐԱԿՁԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

• 111111111

891.89 2346-54  
47-31

2. *Empetrum nigrum*  
Muer gylleberg

Výř - 3697 4/1932

ՊԱՏԿԵՐՆԵՐ

1900

ՏՐԱՊԵԶՈՆ

ՏՊԱՐԱՆ • ԱԷԴՎԻՇԵԹ • Ի

891.99  
99 - 31



-6 NOV 2011

№ 3

• ՓԱՐՈՍ • ՀՐԱՏԱՐԱԿԱՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆ

Պ. ՓԱՓՈԶԵԱՆ

891.99

Փ-31

Կ

ՊԱՏԿԵՐՈՒԵՐ

1909

ՏՐԱՄԻՋՈՆ

ՏՄԱՐԱՆ «ՄԷՇՎԵՐՔ»

60035

28.08.2012

ԱՐԴԻՇՏ ՄԱՀԸ

( १०३८ )

Ահապատի մէջ արշուող, ան տառը թունդ հանգ և  
ազտութեան մէջ մեծած խրխնաց առևս ծը՝ թակարգի  
մէջ բնիւա :

Անտառից ելած՝ որս էր որսնում, շողջը ահ սփռելուն հանգը՝ մասինն հրձւում, երբ յանկարծ գլուխեց ընկառ և մի ցանցի մէջ իրան բոհւած գտաւ։ Մի ցանց ահուելի, յանդարար շարժւող, կծկող-գալարան, որ մի ըսպէի մէջ կաշկանդեց նրան, քաշեց-հաւաքեց ու կծիկ գարձրեց։ Ոչ մի շարժւում խակ գործել չէր կարազ, մի խումբ կոչտ կապէր, սարդի ճանկելալ՝ պարզեւեցին նրան և առինձը ընկած էր խճճւած, կապւած . . .

Առիւծը մանչաց, կատաղեց, բուռն ճիղեր գործեց. սատասահեց, կապերը կըծոտեց, որչափ ոյժ տներ՝ զալարւեց, տանջւեց, բայց ոչ շղթան փշրեց, ոչ ցանցը պատռեց . . .

Անտառի քաջր, կենդանիների արքան գերի էր այլ-  
եւ իր կեանցրում երբէք կապեր չեր տեսել, արդ ելքի ա-  
ռաջ գլուխ չեր ծռել. Ըլտթել էր դաշտ, ձոր, անապատ  
անհոգն, անցել էր անտառ, գետեր սրբնթաց, արարել  
փշրել, մաղլցել լեռներ... աշխարհն ամիսով ոտնատակ  
տեր, աղաս օդի մէջ ապրել անկաշխանդ, աղաս էր  
սնել. աղաս էր ծնել և ահա այժմ կծկած, գալարած,  
ցանցով խճճած, գետնին պինտ դամած. անհասկանալի  
կապերով սեղմած, չեր էլ ընթռնում թէ ի՞նչ էր եղել,

ի՞նչու բանառը կրել և կամ ո՞վ էր նրան այդպէս խղճակ գտան դրոթեան մէջ ձգել :

Մոհնաց, ոստնեց, ժամելով ճդնեց, ապա՝ յուսահատ, աչքերը փակած, դլուխը կրծքին, բաշը իջեցրած սկսեց խորհել :

Ի՞նչ էր այդ ոյժը — իր ոյժից շատ բարձր. այդքան խպասննիկ և այդքան ճարպիկ . ու մն էր ահռելի ոյզ շանթող ձեռքը, անսառի հերտից կծիք էր շինել ու անշարժ, գերի դաշտի մէջ դամել :

Եւ նա վեր նայեց : Մի թեթեւ ու թոյլ խշրոտայրեց, ապա, իր ցանցից մի գոյլ հեռում մի մարդ նրամարեց : Մարդն էր այն չնչին արարածը, որից տասնեւակ ներ նա պատառել բղկտել էր յաճախ և որն այժմ այնտեղ, ցանցի կապը ձեռին, նայում էր խրոխտ որան, նայում հրճանօք, ծաղրում արքայն, ծաղրում հակայն . . .

Ելու, ողեց ոստնել, յանդոգն ծաղրողին մի պատառ շինել, փշրել, տրոցել . . . Բայց մարդը կապը ձրդտեց և ցանցը կոչ եկաւ, առելի սեղմեց ու տուխծի ջանքերն ի գերեւ հանեց . . .

Ո՞հ, ի՞նչ անկառմ, ի՞նչպիսի վիճակ : Խաղաղիք լինել մարդու ձեռքի մէջ : Ենթարկւել ծաղրի, հեռու անսառից, խլած անսառատից, աղատ վայրերից, ստորացու վիկապերի մատնած, անցոյս ու գերի ! . . .

Եւ առիւծը դառնացած՝ լացաւ աղխօղում : Ու նրա լացից անտառը գողաց, ժայռերը հնչեցին, գաշտը թունդ ելու . . .

Օրերով մեաց տոխծը ցոնցի մէջ, նրան կեր տինքայց ոչինչ բերանը չ'տուաւ . նրան շրջապատեցին . բայց լուս մեաց, լուս և յուսահատ, մահւան ցանկացող . . .

Մի օր էլ մի մեծ վանդակ բերին դաւաճան ցանցի

կողքին, յետոյ առիւծին ստիպեցին ելնել. ցանցը լայնցրին, շիկացած երկաթներով հզօրին առաջ մղեցին և նկուն դարձրած՝ վանդակի մէջ տռին :

Այժմ կապ չըկար, բայց երկաթէ ամուր ձողերով կազմած չորս բարձր պատեր :

Առիւծը փորձեց բացւացքների միջով նեղնալ՝ դուրս առնել . գլուխը դէմ տռաւ, հսկա ոստիններով ձողն ի վեր թռաւ, կատաղի քայլերով վանդակին մէջ վազվակեց . հնարք որսնեց, դրաւմ երեւցող աղատ երկնքին կանչեց, աղատ տարածութիւնը տենչաց, ապա արբողջ վանդակը ցնցեց, գզրդացրեց . . . Բայց տեռաւ որ զուր էր, ամեն ջանք ունայն և որ գերի էր, բռնւած, կաշկանդած . . .

Տխուր ու տրուռմ նատեց վանդակի ձողերի առաջ, ոտները ծալեց, պոչը հաւաքեց, զգուխը թաթերի վրա տռաւ և աչքերն անյագ տենչահրավ լիքը, սեւեռեց հեռու՝ իր անապատին, իր գոռ անտառին, որ երեկ գեռես հպարտ ու խրոխտ անցնում էր աղատ, որ երեկ գեռես իր լայն թռփերով շնչում էր, փոնուչմ . . .

Ահա այն ժայռը, ոյն մեծ լերկ քարը, որի կոտարին կանդնել էր ժամերով, արեկի տակ հանգչել . հեռուները զիտել, իր տուր աչքերով սրուեր սրնել և արհամարտ՝ սաքերի մօտից սահող հողէսները զննել, զեռունների փոքրութիւնը ծաղրել . . .

Ո՞հ որքան կուզենար այժմ այդ մողէսների պէս փոքր լինել, սահել, վանդակի ձողերի միջով . գնալ ապրել միշտ խուլ խոռոչներում, աւազների մէջ . չնչին բան դառնալ, տոխծ չըլինել միայն թէ աղատ, աղատ կապերից, վանդակից . բնոթեան ծոցում ողած տեղն ապրել, ողած տեղը մեռնել . . .

Վերջապէս մի օր վանդակը շարժեցին, օրերով գը-

բորած տարին, յետո ինչ որ երեքտի տախտակի վլա մաշսացրին և մեծ ջրի վրա լողացնելով՝ տորսոն բազմաթարգ-երկիր հանեցին:

Առիւծը այդ բոլորը տեսաւ զարմացած ։ Խովի ալիք-ների, կապոյտ տարածաթիեան տուած զմոնյած մնաց—իր անապատը կարծեց . յետո վանդակի շորջ ժողովուղ ժր-խորին նոյեց քամոհրանուք . իմացաւ որ Հոգիւրէ էին նը-րան մի անձանօթ տեղ . որ ոչ ամտառ կար և ոչ անու-պատ . որ հօրիզոնն իսկ վանդակի էր նըրանամ — փակւած, կարճ . սեղմած, և օդը ճնշող, թոհնձր, հեղծող ցիչ :

Նշանած, մերինույսքը կերտու ինչ տէին, արեց՝ ինչ  
ողեցին: Այլ չըմունչաց, ել չըկատաղեց, միայն կծկւած-  
վահետակե մը անկենում՝ անշաղժ ժամերալ, միարդ կը-  
անազատին, երազը անտառին, լոյնարձակ օգին՝ գտան-  
հեկեկանքով լայտ ու մեռնել ողեց...:

Արդպէս նրան տարան, շրջեցրին քաղաքներ, նորից ջեր անցկացրին, նրոց մուոյլ, խեզդիչ երկիրներ և վերջի վերջու մի առառանձնան այդու մեջ մոցրին, վանդակը բարձրացրին, ստիպեցին նրան անցնել մի ուրիշ աւելի մեծ ու կոր շրջանակի մեջ, դառը փակեցին, մի կտոր միւս էլ ներս գտնեցին և թօղեցիմ հեռացան . . .

Առի ծն այժմ գաղանացո մն Էր:

Ե յոյց էր զբանձր կլոր վահեպակտմ տր  
մինչեւ իսկ, կարծես նրան ծաղրելու հասնոր, վարքիկ  
քարերից՝ չոչին, խաղալիքի նույնող մի ժայռ էին կտղմել,  
մասն էլ սինէ ովէս կերտամձ, յանցառ տերեւներով,  
մանրիկի ճիւղերով ճղճիմ ծառ տնկել, ծառի տակը՝ ծո-  
վի չոր տապ...

Առեւծը շորջը նայեց, զգումքով տեսա իր ակատ  
հայրենիքը ծաղրազ ծառն ու ժոյը, պոչով փրկեց առա-

ջինը, ոտքով կսարեց եկրագը և դաշտ նայեց։ Դիմացը՝ պատեր, հեռան՝ որից վաղակներ էլ, ապա՝ մը ուսիլ ծառեր և նրանց տակը պատազ զծուծ նայածներ, ոբո՞ք երթեմն մօտ էին զախս, բերանը բաց՝ զիտում և կամ ահաբեկ՝ ետ էին քաջամմ.. .

Եւ յանկարծ այդ բարորի մէջ լսեց մի ծանօթ ու խռապու մնաչիւն, որ լուտանքը գոչում էր.

— Աղջո՞յն անկերպ մեհամփսութ թեան ! ..

Գարձու թիմակաց տասը քայլ հեռու, նոյնպէս վաճա-  
գակամ, ձոզերի մէջից դրս խն երեցներով, չարամիտ  
վաղը աչքերն հեղնած թեամբ լի՛ իրան էր նայում և երբ  
նրանց ակնարկներ միմիանց հանդիպեցին, արթանարբու-  
գալսնը առնաց ու առաց.

— Աղջո՞յն, անտապատի հզօր գու արքա, զոր անտառ ների, աղասի ժայռերի մեծոց գու հոկտ, եկել ես մեզ ընկեր — մեզ՝ չէվիներիս, մեզ սուրբներիս բախտակից եղել . . . Աղջո՞յն, սղջոյն որհիմ, անկիւրդ վեհափոռութիւն! . . .

Ապա մի մեծ քրքիչ չափսինել այ , դժույլին ծիծաղ  
լու եց նրա վահպ տկից , յետո քրքիչն անցաւ մի երկորդ  
վահպ տկի , սրբութից ինձը առավելի քը բացած , ինպան աշ-  
քերով՝ նայում էր հեղուս թեամբ . . . և այդպէս , մէկէն ,  
քրքիչը քայլեց , վահպ տկից վահպ տկ մնաւ և մի յօպէի  
մէջ առ խ ծն իրան զ առ արջապատաճ՝ նիվն անառնէ-  
ների , գերի զ ազանների , զ այլի և նոյնինկ կապէկների՝  
ծաղրայ ու հեղ՝ ուժիւներայ :

— Ա՞չ, արքունի, խոհար մեր ողջային, կանչած էս իշխուզ:

— Աղօրեած եղիք, հզօր թագաւոր, որ համարձակ-  
ւում ենք քեզ ընկեր լինել, ունամ էր դայլը:

— Արեգ կապիկներս քեզնից հզօր ենք, ճշուժ էն

անճոռնիները — որովհետեւ որտախ ենք և կատակում  
ենք . . .

Ու ծաղր, հեգնութիւն, քրքիչ, աղաղակ ամեն կողա-  
մից երկար՝ տեղացին բոնած հզօրի անպաշտպան գլխին . . .

Առիւծը մնաչեց, սասնեց դէպի ձողերը, ուղեց դորս  
ելնել, տրուել—ջարդել այդ հեգնողներին . . . բայց բաղ-  
ւեց ձողերի, դաղանս պահի հրաշէկ երկաթը այրեց նրա  
նկոն, կատաղի՝ դրսիր թաթերի մէջ առառ և ուղեց  
մեռնել . . .

Դառն էր այդ բոշորը, դառն, անտանելի՝ Մեռնելը  
խիստ լաւ էր, կողենար տեսնել իր արեան կաթիլ առ  
կաթիլ քամնելը. իր անգամների կտոր առ կտոր բզկաթը-  
ւելը, կողնասր թաթերը փրել ձողերի վրա, սիրաը յօ-  
շտել . . . կորդել դորս ձգել . . .

Գիշերն էլ եկաւ մոռայլ ու խոնսու ։ Ծաղնու ու քրքի-  
ջը սաստկացաւ մեծացաւ .

— Ա՛հ, մեռնելուց վախենում ես, դոչում էր վագ-  
րը—վանդակի մէջ ես, վասաւոր արքա՛ . . .

— Ա՛հ, դու թշումու ես, առիւծ ահալից, մշաւոմ  
էր ինձը . . .

— Թքել, թքել առիւծի վրա, ճշում էին կապիկ-  
ները . . .

Առիւծը դրսիր կոռացրեց, քաշեց քարերի ետել,  
աշխատեց միտթեան մէջ լնկղմել, ծածկւել և այդ ծաղ-  
րող ձայնները չըլսել :

Աչ, պէտք էր դորս գնալ. ինչ որ էլ լինէր, մեռ-  
նէր կամ աղբէր—պէտք էր դորս ելնել, ուսքի տակ տալ,  
տրորել ամեն բան, ամեն արարած, միայն մի բոպէ, մի  
վայրկեան աղտատթեան մէջ լինել, այն տեղ էլ մեռ-  
նել . . .

Եւ նա մօտեցաւ վանդակի դռան, խուլ մոնչիւննե-  
րով քաշեց ձողերը, ցնցեց ամեն բան ու գերբնական մի  
ոյժով, յուսահատ ճիգով վշրեց դռան շղթան ու դուրս  
թռաւ իր գիրնացը բոնած հրաշէկ երկաթի վրա . . .

Գաղանապահն էր այն, մի սպառնալից, կակած  
ձողակավով՝ որ մօտենում էր նրան և հնչեղ ձայնով ներս  
բաւիլում . . .

Առիւծը ժողովեց իրան, յետո ոստեց :

— Մեռնել աղատ . . . դոչեց նու. և երկաթը վրժ-  
ժալով նրա կուրծքը մղւեց :

Առիւծը դալարեց. երկնքին նայեց, անապատը  
երազեց, անտառին հառաչեց և հրաշէկ երկաթը կրծքին,  
աչքերն աղատութեան, մեռաւ քաջի պէս, բայց, աղատ  
օդում, աղատ երկնքի տակ . . .



## ԾՈՎ

(ՊԱՏԿԵՐՆԵՐ)

## I

Միաւար ու անդուլ շշուկով լի համերգը գեղիք ափերը օրօրելով, վետ-վետ ալիքների կայտառ սապա միերը միմիանց վրայ հանած, անհոգ ծափերի և շերտաւուամների պչրանքներ քամահաճօբէն վերջալոյսի տակ դանառուելով—փռում է ծովը անձայլածիր ու ծիծազախիտ, ծովը ծաւալուն ու կատակաբեկ, խոնջեցած ծերոնի հսկայի նման պատկառելի:

Լոռ և խաղաղ է նա, չնչառումը կանոնաւոր—քընացողի պէս, շարժումները զանդաղ—յոդնածի նման: Աչ կոհակներն են ծառանում սպիտակ վրկալներով, ոչ ակոսացող ծափեր են գլուխում և միւսնաց վրա նետում ռերսակ բաշերի աճեցուն շարքեր, ոչ ել պնհամար՝ ախքներն են իջնում—ելնում սպոսկան ջրերի խորքերն իջեցնելու համար յուզմանք ու վրդում միեր:

Հանգիստ է ծովը, լուրջ և խոհոն: Եթէ երբեմն մեղմիկ շշուկով, պարերեարար ափերն են լզում նըա ջրերը և ճապաղ տարածումով անց զր ըանում—հսկայի կենուշնակոթեան անշեջ խանդն է այն, որ տպառմ է միշտ մէն մի կաթերի մէջ:

Այ սպասողական խոհեր կաղման լր լոյն դէրքի վլրայ, ինքնանիստում մի և լոռ մատօնմիերի խորշամիերը ճակատէն, աչքերը յառած, անդորր է ծովը Անդորր՝ ըրնութեան այն լոիկ վարկենի պէս, եղբ աերեի և ցօղուի արձանացումը սոսկում է աղջում, երբ օդի մէջ առառնում է մրցկի զարհագերի տըտկանը անշատ սոս ելի նը-

ման, և երբ միմնոլորդի խեղտիչ անշաբժոթիւնը գալիք փոխորինի պայմանումն է զգացնել տալիս:

Անշարժ պատկոծ է և ակնարկը ժայռերին է և Յոդ-ներ է հսկան, շանչ և առնում էր լոյն կուծքքի երեխներով և մեծ թուքերի խուլ շշնկացով . . . :

Այդպէս է հանդչում ծովը և այդպէս նու սպառում է ներքին պյաների վերատին կուտակմանը, որպէս զի նորից ենի, տպառաճների գէմ, փոփորիկ յալուցանէ պատւարների հսկայի համար էլու:

Այդպէս է նոյնակո պահ մի լիտին կարծես մնջում, սակայն լրապէս պյաներն է կոզդուրում և տիզացնում ոյն ժողովուրդը, որ շղթաների ճնշման և բանակալութեան զարշանքների գլանկցոթիւն ունի, այլև զարթումի անզուռպ տեհչանքը . . . :

## II

Եւ ահա հեռո՛ւն, հորիզոնի վրա երեսն են գալիս մանրիկ, չշին կոհակները վետ—վետ: Ճրերը, տարածութեան հեռաւոր ծայրերիցն սկսած, նոր հովերի գրդամիցը յուղած, կոթիշներին են ներշնչամ զարթումի աղդամնանը: Երերուն են, ցնցում, անհամար թմբիկների փոխածն իրար ընկերանում, խոճապայից վաղքով միմիւնոց ետի՛ը շարում, լրագրանչուր կաթերի շարժումն են ժողովում, մէն մի շարժման շշուկն ու շիումը է մի ձուլում և առաջ նետում . . . :

Այ զանազան կողմերից գալիս են ահա արտղ հաւաքոծ, ահեղ շառաջիւնի սրուռ զոյացրած, հսկայ մեծոթեանը հասած սպառնալից, մթին զանգւաճներ, գալիս են անդիմաղերի, հաստատ ընթացքով, վրփա-

տէղ ու կատաղի . . . :

Զարթնել է հսկան, կնձռել է գէրքը, խոր ակօսներով ճակատն է խորչոմնել և զայրագին շարժումներով կոխը գերսկսել: Մշտական, յամառ մի կոխու, որ անպատճար աճեցումի փափա՛դն է խանդալից, անկաշկանդաղատոթեան ձգտումը անսպառելի:

### III

Գալի՞ս են . . . գալիս՝ են ծալքերը միմիանց մկող աճապարումնի: Ծովի խրախոս և մարտակոչ գերքի կնճիռներն են դրանք:

Վաղում են ջրերը՝ երար դօրեղացնող շառացիներով, շուրջը համակ՝ պատերազմական աճեցոն որո՞ւ է հնչում, որոտ, որ նետում է գէպի ժայռերը, թնդացնում է ապառաժները:

Ու գոզում է շրջապատում ամէն ինչ, տիերը կարծէս կծկում են, որպէս չափազա՞նց չնին, չափազա՞նց արհամարհելի շրջափակեր: Խափային բայսերն եւ, ողեւորութեամբ, հովին տուած իրենց գիսակները, հեռուն կարմիր, մօտիկից կանաչյանկարծակի պարզող դրօշների պէս ծփում են եռանդաղին, ողջոնում հսկոյի զարթումը, վերսկսած պատերազմը:

Ծովի սորի է ելել: Մարտնչողի անցողո՞ղու յամութեամբ գնում են նրա շղթայաղերծ ջրերը, մոնչում են ահեղագոջ, մէն մի կաթէլն այնուեղ շարժման մէջ է, շերտուոր փրփրումներով երախներ են բացւել ամէն կողմից և նրանց յետագալձ շարժումը՝ թափը ու ժգնացնելու համար բնական քայլն է, խոյացումը մեծացնելու դօրեղ շեշտը . . .

Երբ շարթում է ծովը, երբ զարթնում է նա և զայ-

րանում-ոչինչ չը կա, որ նյա ընթացքին ընդդիմանուլ յանդ գդնէ: Համակ ըմբռատացումն է նա, ամենազօր, ամէն բան տապալող, աղաղակութը վսեմ և ոյժովը անկուն բուռումացում:

Եթէ պահ մի ետ է քաշումնա տիերից, խոր գէպի ներս է գնում խնարճ ու գետնաքարչ, կծկուած և անազմուկ—այդ պահը նրա ոյժերին ամփավերու և հանգստութեան ժամն է:

Ու քանի գէպի խոր ու ներս ևն քաշումը ջրերը անմուռնջ, չընքան մեծ ուժգնութեամբ, այդքան բարձր տիզացած ու կատաղի գալու են նրանք քանդիչ ու ուերիչ զօլ ութեամբ, շղթաներ փոշիցնող հայւո ծները ջախճախիչ գարձրած:

Այդպէս է ծովը: Տեղատաթիւն մեծաթիւն՝ մուկընթացութիւն վիթխարիսութիւն է յառաջացնում:

Այդպէս է նաև պահ մի տեղի տուղ, յաղթահարւած և ոյժասպառ այն ժաղացութերը, որ խոյացման ուժգնութեան համար պէտք անի կողդու ելու, ողէոք՝ հանդշելու, ոյժերը ժողովելու . . .

Ծովը հմայիչ, ծովը ծփուն և գեղածիծաղ, լուսի շողքերի տակ գողահար ննջող մանկի գեղեցկութեան, կոյսի երեսին ժպտող, ծովը շողշողոն—պատկերն է կինսառախ, եռանդուն և հրապութիչ այն ժաղացութիւն, որ ապա՞ս է իր ձգտումների մէջ, աղատ՝ իր մոտածութիւնների և աղատ՝ իր թռիչքների մէջ:

Ծովը՝ մի մեծ լաթի պէս գողահար ու անկենդան, յըտի մէջ սրորթացողի ողորմելիսութեամբ և քնէոծի ապշտութեամբ—պատկերն է սորկութեան, տղիստութեան և արատների մէջ մնած ու ծւէնների փոխած հասարակու-

թեմն, որ ձահիճների մէջ է սրոնում իր կեռնքը և շրդիաների մէջ ծխսելուն է իր հեռանկարը. ժողովուրդ անդեմ, անձաշակ, բիրու և սորվահոգի:

Բայց ծովը կնճռու, յարձակման համար ետ դայարող, ծայր՝ այսուհետեւ կատաղի և փրփրալից երախներից մանչիւն արձակող, ծայր՝ զարհուրելի զօնդւածով ժողուշերի վրա նետող—պատկերն է այն աղնիւ ժողովրդի, որ զիտալցոթեմն լուսէների շնչով ծառանումէ և իր իրաւոնքները, արդարութիւն ու ազատութիւնը կորում, յաշատուում:

Նոտիր ծափի մօտ և տօփր նրանից այն ամէնք, ինչ նրա ջրերն են պատմում, ինչ ալիքներն են անհջում:

Օսի և ժողովուրդ—երկու սի էլ միհնոյն շալժու միերն ունին, միհնոյն թափր... և միհնոյն ապշտիւնք:



## ԱՆՏԱՌԸ ՇԱՐԺԻՈՒՄ Է...

(ԶՐՈՅՑ)

I

...Եւ այդ սքանչելի հովիտում, առատաբու զիս ջրերի, կապուտակ վէս ճայտակների, ծաղկաւէտ բլրակների կողերին, հին, անցիշտառակ ժառանակնելից ի վեր, աճէլ սփուռել եր մէ չըեղ, խիտ անտառ:

Լազնին ու թեղին, լորին և բօփին ճէղ-ճիւղի միացրած, արմառներովը հողը պինտ զրկած, անհանուր ճիւղարորութեան՚ն, բիւրուսը ընձիւղներով՝ տարածուել եին հեռանելը, երկերը բեղմանորել, ուշ-շարաբու հովով պարուել և ապրում էին զոտող ու ազատ՝ մեծ երկրքի տակ, ջերմացնող արեի ունչ, անցանող անձրւով ուռացած, զավացած:

Գեռ այդ քիշ եր: Գնում էր, շալժում անտառը, մասդիցում՝ լնակարանը շրջապատող քարսժույների վրա, ճեղքում նրա կործքը, անցեամ, պատյան զօրծում խաճառ կնճռուտ կոյտերի մեջոցով, իր սերնդեմն նոր շառաւելունի ճպնում էր միշթիղ հոգ էոկ շմոզնել անբնակ, մի քայլ խակ չծպել անմշակ:

Աւ անտառը շրջապատող կոյտերը ճակատնին կընճռած՝ զիտում էին այդ, ատամ կրծեցնում նրա շարժուն, կենսանակ զոյտթեանը վրա:

Չոր, լերկ ապասամներ էին գրանք: Աչինչ չը բառ առում այնուեղ բացի մամոռից. ոչ մի թռչուն, ոչ մի արագած, բացի անապղ մաղեսներից: Անձրին ու արել իսահծում-մրկում էին նրա կողերը, քամին անարզել ծեծում-ջարդում՝ զլու խները և նվանց զոյտթիւնը միմիայն:

անտառին էր օդակար լինում. — ստեղում էր, պահպանում գժնդակ ցրտից :

Այդպէս էր բնութեան մէջ երկրի այդ անկիւնը : Ժայռը զայրանում էր անտառի վրա, անշարժութիւնը առանում էր կրծտեցնումք քայլող կեանքի դէմ. իսկ անտառը, այն հովատն, շքեղ, սաղարթալից ծառերով անտառը աճում էր, ժպտում արեխն, հրճում իր կեանքով, մեծանում, խտանում, գնում էր — գնում և ապառաժների գէմ կաղնիներ ցյում. նրանց ճեղքերում վարդ, ծաղիկ սփռում :

— Յազրում են մեզ դրանք . . . . մոնչեց վերջապէս վիթխարի կատարը — ծայրաւմ են. Նրանց իւրաքանչիւր ժպիւը մեզ է հայհայում :

— Զարդենք յան դո գներին, գոռաց ժանդոտ ապառաժը, ուզում են մեր սրուերը պատռելու երեկ :

— Գրուենք հովիար, խորհուրդ տւին մանուստ քարերը, այնուեղ հողը փափակ է, օգն աւելի մեզմ, ջրերն առատ . . . .

Երկար վիճեցին, երկար սպառնացին, ճահճին՝ անտառը ուղղելու հրաւերը կարդոյին, գաղ անների՝ ծառերը ոչնչացնելու խորհուրդը ներշնչեցին :

Բայց անտառն ոյն շքեղ, ամեն առառօտ զարթնում էր մի նոր, առելցած տժոյ, աճում էր — գնում բեղնաւորութեան հակա քայլերով :

Այսուեղ էր թռչունն իր երգը հնչեցնում, սոխակը յուսպէմին՝ գայլայլալ ողջունում, կենաւպարար զովութիւնը՝ մէծ սաղարթների տակ անուշ, քաղցր բուրում, թաւիչ մարդագետինը արեի տակ պապզում :

Նոյն խոկ այնուեղ էր, որ վատակները ժայռերից խո-

Խ Հ Հ

սափելով՝ հանդիսաւ էին որոնում, ուրախ-զւարիթ խոխոջում, խրաքանչիւր ծառի, բնձիւղի արմատը գգւում :

Այդ արդէն անտանելի էր քարանժայուերի գաժան կոյտի համար : Ամեն ինչ, — ծաղիկ, ջոր, նոյն խոկ մողեն ու մասնում՝ կռանում էին դէպի անտառը. կարծես՝ խուսափում էին ժայռերից, ուզում էին գնալ ապրելու թարմ կանաչներում, զով ստերների, դալար ձիւզաւոր թեան տակ :

Վիթարբի կատարը գողտմ էր զայրայթից, ճահիճը մի կողմից ճգնում էր էր զաղիր բորբոք անտառին հապցել, գաղանները մի այլ կողմից փորձեցին նոր ընձիւղները արւորմէ, ջարդել . . . .

Աւ ամեն ինչ, ամեն անարդ ոյժ ի մի գուհարած մտածեցին վերջապէս կասեցնել շարժւող կեանքի ընթացքը :

Աւ յաջողւեցան :

Ինքը անտառը, իրերի բերմանք, գոյց և իր չարտարխութ գիրքի պատճառով, և կոմ, ով գիտէ, անսաւեր ներքին գոտաճան երկպառակութեամբ՝ թուլացաւ, ջլատւեց և ժայռ ու գողանի, ճահիճ, զեռունի կերակոր եղաւ :

Եկաւ աշնանային ժանդ սփառզ եղանակը. բարձրացան խորշակներ, ժայռերը իրանց մէջ կռատակած՝ ջրերը բաց թողին, գաղանները կատաղի ոյժով բանակ կաղմեցին, ճահիճը մեծցաւ, բորբոս-զեռունոյի մօտեցաւ կեանքը . . . .

Յետո, հովերը ծառերին միմիեանց դէմ հանեցին, զարկին, ծեծեցին, ճիւղը ճիւղով ջարդեցին, արմատները բացին, թուլացրին, կաղնուն լորենու վրա տապակեցին, բոխին՝ հացենու տակը ճղմեցին . . . .

234654



Եւ երբ քարաժայռերը չար քրքիչներով այդ աւելը ողջունեցին, վիթխարի կատարը ցնցւեց, գարձաւ լերկ ապառաժներին ու գոչեց ահեղ.

—Յառաջ, ժամանակն է այժմ վերջ տալու այդ ատելի, շարժող կեանքին! . . .

Եւ ահա մէկէն դղրդաց գետինը, լեռ ու ապառաժ ցնցւեցօրորեց, քար ու քառաժայռ շարժեց-սաստանւեց, մեծ որսումով ոստնեց, կատարը ծուխոց արձակեց, մոխիր, խանձող ու այլող կրակ դուրս ժայթքեց և այդ բոլորը, ահաւոր գանդազութեամբ, թանձը խռարի մէջ իջաւ, անտառի վրա ընկաւ, տակովն արտա ծառ ու ծիւղ, ծաղիկ և ընծիւղ։ Զարդեց, տրորեց, մրկեց ու ծածկեց նրան քարի կոյտերի, փոշու, հողի, տիզմ ու աւազի մէջ . . .

Թռչունները ահարեկ՝ վախան, հեռացան տրախ կարկոչով հսող ջրեր կամ ցամաքեցան և կամ ճապաղ վախուսով՝ շտապեցին գետնի խորքը ապաստանիլ։

Այլ ևս ո՛չ մի ստեր. զովութեանը յաջորդեց չոր անսպառը. քարոտ, ամայի, արևի տակ տառապող ամբ լութիւնը գրաւեց ամբողջ հովիտը։

Լճակները յուզւած՝ ջանացին կոխ մղել, ծեծել, հեռայնել գլուխող ժայռերի, մարել կատարի հսանուու կրակը, և, մինչև այդ խաղաղ ժպտող ջրերը, անընդհատ կոխի եղան ապառաժների դէմ, ճգնացին փշել նրանց կողերը, ոյժ տոխն լզելով. մաշելու նրանց կոչտներկայտթիւնը, բալց չարագէմ ժայռերը աւելի խորը մըղւելով իրանց տակ մեռցրին, ոչնչացրին ամեն գալարիք, ամեն կեանք կամ շարժողութիւն . . .

Այդպէս էր ահա, որ անտառն այն շքեղ՝ տրորեց ժայռերի ոյժի տակ։ Այդպէս էր ահա, որ այն ոքանչե-

ի հովիտը սև ու ահաւոր քարերի անսապատ դարձաւ, ծովակների շուրջը քարերի շղթաներով կաշկանդւեցաւ և շրջակա ծաղկաւէտ բլուրների վրայ չոր ամայութիւնը եկաւ, բնակւեցաւ . . .

Եւ այդ գեռ բաւ չէր. ճահիճն էլ միւս կողմից մօտեցաւ, դիմազը բելու ոյժ չունեցող անտառի կուրծքը մտաւ, եղած ծառերին իր գարշ բորբոսով պատեց, զեռունների և գորտերի ճախներով ամեն թռչուն ու սպասակ հանեց, գուրս նետեց։

Վարդը մեռաւ բորբոսից, ընձիւղները արմատխիլ, տիտոր շաբքերով, քարերի ճեղքերում իրանց գերեզմանը գտան, և, մշտադալար, թարմ կանաչութեանը յաջորդեց ախղմով ու բորբոսով կանաչած հոտած մի ճահիճ։

Եկան նաև գազանները ։ Խմբովին եկան։ Զարդեցին, փշրեցին, ոտնատակ առին, ամեն ինչ տրորեցին և հովատոն վայրերը չոր խոխների ասպարեզ շինեցին, որ այնուհետեւ գայլերն էին միայն ոռնում, բորենիներ թափառում և խողերը՝ հողը քրքրում . . .

Անտառը յաղթւել էր, ընկճւել-ոչնչացել, և գեղեցիկ հովիտը լերկ անսապատի փոխել . . .

## II

Երկար, անհաշխ երկար տարիներ տօնեցին ժայռերն իրանց յաղթւթիւնը, վայելեց ճահիճը՝ իր տիտապետութիւնը, տրորեցին դապանները՝ իրանց անկիւնը։

Երկար, անհաշխ տարիներ տորաց աւաղախառն քամին հովտի վրայով, ծովակները ալեկոծնեցին իրանց ափերը, մոնչացին, լացին, փշրեցին քարերի շրջանակի գեմ։

Երկա՞ր, անհաշիւ տարիներ մողէներ ու օձեր աղա-  
տառեցին հայտաբ իրանց զգւելի երգերով։

Արեւ խանձեց, անձրեց ծեծեց, աւազը շերտեր  
կազմեց, ճգնեց անցեալից ոչ մի հետք չժողնել, և ա-  
մեն ոք կարծում էր որ անտառը մերջնականապէս մեռել  
ոչնչացել էր ու այլ ևս չպիտի կարաղանար շարշւել։

Սակայն այդպէս չեղաւ։

Եւռնային երկրներում, նոյն իսկ ամենակարծր դրա-  
նիտային աշխարհներում, յաճախ տեղի են ոնենում այն-  
պիսի գեղքեր, որ նոյն իսկ ընտթեռն տարօքն երե-  
ւոյթների վարժ անձը մնումէ ապշած։

Զրերեց, բռասական տեմբինից հեռու, միապապակ  
խոշոր ժայռերի մի ամենաչին ճեղքը մտներով, անձ-  
րեւ կաթիշներից մնուղ ստացած, տարիներով խուլ աշ-  
խատահքից յետո, սակաւ առ սակաւ կարծքը ճեղքում  
և վեր են պարզում այնպիսի պյուղ մէ ծամեծ ծառեր,  
որ կատարելապէս անհասկանալի է մնում թէ ո՞ր սափե-  
ճան հսկայ ոյժ էր պէտք այդ բոլորն անել կարաղանալու  
համար։

Յասական աճեցողոթեան ոյժը, յիշառի, եթէ նա  
դպյութիւն տնի նոյն իսկ վարքիկ սազմերով, ոչ միայն չէ  
մեռնում, այլ ոչինչ, բացարձուկ ոչինչ չէ կարող ճնշել  
նրան, ժամանակի ընթացքում վշրել ծակելու ամեն ար-  
դեր, բարձր պարզելու իր ճիւղա որութիւնը և իր բեղը  
նառը ուերնական պատահումն շնչելու իւս ու ապա-  
ռաժու։

Սակայն յաղթողներից ոչ մէկը չի դիմէր այդ։ Ոչ  
այն վիթխարի կատարը, որ ծախս ու կրակավ մէկեց ա-  
մեն ինչ և կարծեծ մեռնել անտառը, որ քար—ապա-  
ռաժով վշրեց ամեն ընձեւը և մտածեց ոչնչացնել շար-

ժումը, ոչ ճահիճը դիտէր, որ բարբոս-վեռունով պատեց  
անտառը և ջանաց վտառթիւնով կանգնեցնել կեանքը,  
և ոչ էլ դաղանները դիտէին, որնք տրաբեցին ամեն ծառ  
և յուսացին անապատ շնչել կեանքի վտառթէն։

Բայց հէնց վիթխարի կատարի մօխիքն ու կրակը.  
միացած ճահճի սիռած վտառթեան, դաղանների տրբ-  
որած, խոխ դարցրած տերևների հետ—խնամեցին, ա-  
մեն վտանգներից ազատ պահեցին մեռնող անտառի ա-  
ճողոթեան ոյժը և երկար, շատ երկար ժամանակներից  
յետո, ապլոթեամբ զգացին, որ այնտեղ — խորքերում,  
քարերի տակ, ժայռերի թողած փոքրիկ ճեղքերի մէջ,  
ճահճի կոտած վասութեան խոսերում՝ կատարում էր մի  
նոր բան։

Չիցին, գտիտ և վաքրիկ արարածներ այս ոյն կաղմից  
գլուխ էին գուրա պարզում, ամենավորը կաթիից մնան-  
ում, ստերից զովաճամ և նուրբ կանաչութեամբ անա-  
պատը կենգանացնում։

— Ի՞նչ է այն, գոչեց ապշութեամբ լերէ ապառաժը.  
կարծես կանաչ բաներ են լոյս ընկնում։

— Ոչինչ բան, քրքջաց կատարը, ճզմեցէք կամ ան-  
շագելի թողէք։

— Թող աճեն, ի՞նչ կայ, տասցին քարերը, մեզ հո-  
վանառում են, զարդարում միայն։ Ի՞նչ են այդ ճիշին  
արարածները, որ մեզ ոշագրութեան առարկա գտա-  
նան։

Աւ թողին։ Ժապիտը գէմքին՝ ժայռերը դիտում էին  
փոքրիկ արարածների բաղմանալը, ճահճը մինչեւ իսկ ո-  
րախացաւ, որ ինքն էլ բուցներու ընդունակ է. իսկ  
դաղանները արհամարտթեամ անցնում էին նրանց կող-  
քով։

—Յիմար բաներ են, թողէք աճեն օքքան կուզեն!...  
Եւ աճեցին, բարձրացան, արտասները խորը մղեցին, լուս, առանց ազմուկի պարզեցան ամեն ոզգութեամբ, ժայռերի տակ մտան, ճեղքերից, խորշերից դրւութ դուրս պարզեցին, յետո մէկէն, բուռն մղումով այնպէս առաջ գնացին, որ ինչքան քար կա՞ ճեղքեց, ինչքան ապառաժմ՝ երկու կտոր եղաւ... .

Անտառը ժարժում էր:

Գարնանցին անձրեներից յետո եկան հիմնալից, աճեցնող օրերը, մանր ճիշգասրտ թիւնները գործ պարզեցին ոճգույն թեամբ, ար նաև ներ հոկտ ոյժով, դէն գյորեցին իրանց ճնշող քարերը, ազատուելով փշրատեցին, զրեթէ հող շինեցին ապառաժմները, ճահիճը անզի տառ տառ տհորեկ, զարդանները պոկտ մով եւա քաշեցին նոր ծառերի գործ պարզած փշերի տռուջ, հովհար մէկէն կինդանացաւ, առանները հոսեցին, ծովակները ժայռերին ծեծելով, տակը վորելով՝ փլեցրին ու ջրով ծածկեցին...

Եւ այս սունը այնքան որսող թեամբ կատարեց ու մեծաւ այսուհետեւ, որ վիթխարի կատարը սուկումից կծիրեց, ժայռեր, ջարդած շատավեցին թագներու անող խոսերու տակ, զողովները առանց եւ նոյելու գործ թամն հովհարից, ճահիճը սիրած իր վերջին րորդուր տարած կծիրելու հեռաւ որ ժայռերի սոսառում է:

Այսուհետեւ այլ ևս անհնար գարձաւ շարժուող սնատառի տռաջն առնելու:

Իրաքանչիւր ծառ, իրաքանչիւր թուփ և ծաղիկի բխրուոյ ընծառներ արձակեց ամեն ոզգութեամբ, կազմին, լորին, ըսխին, հացենին դէն շալաւեցին իրանց նեղող քարերը, ճակեցին, անցան ժայռերը, ոտնասակ:

առին, իրանց արմատների խրաքանչիւր թելով փշրտեցին — հաղ շինեցին նրանց և այնտեղ, որ շատ տարիներ առաջ գաղանների էին ոռնում, գորտն էր կակատմ, մողէսը թափառում այժմ բազմաթիւ վտակներ, առելի առատ քան առաջ, եկան ոռոգելու ժառ ու ծառաստան, վարդ ու ծաղիկներ:

Այստեղ, որ չոր անապատը աւազն էր ողորտում օդի մէջ, այժմ ծառերի տերեւներն էին սոսափում և ճիւղերի միջեց թռչուններ էին գայլայլում:

Այստեղ, որ քամին սորալով խոնճում էր ամեն բոյն, այժմ թարմ զափթեան մէջ աճում էին շուշոնն ու նարգիզը, պատն ու մանիչտկը:

Այստեղ, որ ժայռերն իրանց յաղթանակն էին տօնում, ճահիճն իր զազիր բորբոքը հանեցնում, դաղանն իր ատամներով կարտում, անցնում այժմ ու հող էր զայնում, խիս, կենդանի, շարժուն անտառի մէծ տարս ծտիւն էր պարզում և կեանքը ժապում էր, ժապում իննդադին, անելով առելի բարձր, առելի պիտի, քան ամեն ժառ կամ կրակ ցայտող կատար...

Անտառը գարձեալ շարժուում էր, աճուղի թեան ոյժը յաղթել էր, աշինչ չէր կարսպացել անհետացներ իրան, ոչ ժայռ, ոչ ճահիճ և ոչ գաղաններ...

Եւ այժմ, այդ սքանչելի հովհատում, սուտարուղի ջրերի, կապուտակ վէս ծովակների, ծաղկուէտ ըլլակների կողերին, հին, անյիշատակ ժամանակներից ի մեր անող անտառը գարձեալ իր հողն է ըռնել, գարձեալ ճիւղ ճիւղի միացրած, արևատներավը հողը պինդ զրկած, անհանար ճիւղասրտ թեամբ տարածուում է հեռուները և ճկնում է մի թեղ իսկ չժողնել անբնակ, մի քայլ իսկ անմշակ:

Այդպէս է լինում: Լեռնային երկրներում, նոյն իսկ  
գյանիտային աշխարհներում՝ յաճախ տեղի են ունենում  
այնպիսի գէպքեր, որ նայն խոկ բնութեան տարօրէն երե-  
ւոյթների վարժ անձը մնում է ապշած . . .



(ՄԵՌՆՈՂՆԵՐԸ ԲԱՐԵՒՌԻՄ ԵՆ ԶԵԶ' . . .)

I.

Ապահովութեան մէջ ապրող բարեկամ!

Չի անցնիլ մը քանի օր և այսաեղ էլ, ինչպէս մեր  
սկզնն երկրի ամեն մի անկիւն կողոզի մեր արինով: գեռ  
գիտիները սփռող կրթին վաղոցիւրին, մեր չքեզ հայրե-  
նիքի երկինքը կը սեանա սգռապների բազմովինից և  
օդը կը լեցի նրանց կուռացով:

Ո՞ր կողմէր գառնաօ՝ աւերակ եռ աւեսնելու, ո՞ր տոնը  
և անես՝ բռնաբարած ու ձգուած աղջիկ, գետնատարած  
մայրեր, գլուխները սիների վրայ չախչախած մանուկ-  
ներ եռ աւեսնելու և գերեզմաններ, գերեզմաններ:

Ես էլ, բոլոր աղգականներգ, ծանօթներգ — մինչև  
յետինը՝ մեռնելու ենք սահմանւած և քեզ բարեւ ոնինքը  
պահպախտ եղաւըր, որ գոյէ գեռ շատ ապրես, շոտով  
գտա մեր գերեզմաններին այցելելու և նրանց վրա կանգ-  
նած՝ հայրենիքիդ ողբը երգես

Յոյս չոնինքը ապրելու, ո՞չ Քաղաքի մէջ անցած—  
գարձածն խոկ ապացուցանում է, որ բոլորին կոտորելու  
են:

Որքան սառնոթեամ եօմ զքում ոյս բոլորը և գու-  
տրկեօք սառնոթեամք չէ որ այս կրկնուած, երեքինած  
նկարագրութիւնից էլի՛ մէկը պիտի կարդաս:

Զոյս օր սոսաջ սկսեց. ե՞րբ պիտի պայմի՞ շրգե-  
տեմ, այսօ՞ր, մի՞ ժամից, գոյէ այս բողեի՞ս:

Մի քանի օրէ արգէն, որ շրջակա քաղաքից հասած  
կոտորածների լուսերը գրղուել են բոյոքի ջղերը, լարել  
ու մի թեթև աղմակ բառական է ամենքին զարհութեց-

նելու :

Պիտ' տեսնէիր սոսկումը , երբ շակոյի մէջ լուր տարածւեց , թէ վաճառական վահանին մի թուրք՝ դաշոյնի հինգ հարւածով , փռել էր գետին :

Շուկայի մի ծայրից գէպի միւսը կարծես մի տրադան սահեց : Աղմուկ , շփոթ , փախողներ

Որտումայ փակւել էին խանութների տախտակնա վեղերը , չատերը խերք կորցրածի արէս թողնում էին ամեն ինչ—խանութ , գլխարկ , կօշիկ և վաղում էին գէպի տուն :

Պահ մի ես , շական դատարկ էր , ամայի , բաց , խիլ վաղոյներում վաղող-վաղողի :

Եւ լուրեր հետղնետէ մեծացող , երրեմն այլանդակի :

Որպէս թէ սպանել են ո՛չ միայն վահանին , այլև շատ անցորդ հայերի , որպէս թէ թուրքերը խուրը առ խումբ փողոց ների ծայրում կանգնած , դաշունում են կամ դըն դակահար անում բոլորին :

Հաւաքել ենք եկեղեցու բակը : Ամենաալահազար տեղը է : Ահա լցւում է ՛ատոս ոք , խոց և դպրոյների սենեակիների : Կին , տղա , ծեր՝ ծչում են , լալիս , ողբում : Այն իր ամսավինն է փնտում , մէկը՝ իր որդին , միւսն՝ իր եղբայրն որոնում :

Մի նշանած աղջիկ էլ , ընկել է սենեակից-սենեակ , բակից-բակ ու մի կողմէ թոպած ամօթխածութիւնը , խելակորսոյ՝ իր սիրելուն է որոնում :

— Վահան , վահան ! ձայնում է նա սրտահմիլի , աղխղողմ :

Սիրտս սեղմում է : Ի՞նչ վահան է այդ :

Մէկը , որ սոսկումց կծկել էր մի տեղ , կանչում է :

— Ի՞նչ ես ողբում , աղջիկ վահանին սովահեցին :

Անուան զոգագիպութիւն էր թերես , բայց մի սոսկայի ճիչ թուաւ աղջկա կրծքից և նա փռւեց գետին :

Սակայն ով էր ուշք գարձնողը : Միւնոյնը չէր : Աւելի լաւ էր նախօրօք մեռնիլ , քան յետո ընկնիլ թուրք զինւորների ձեռքը . . .

Մի ուրիշ տեղ , կուչ են եկել ահա կին ու մանուկներ միմիանց են կպել ու լալիս են :

Որպիսի լաց . . .

Եւ պառաւները , որոնք կործք են ձեծում , աղօթում . . .

Լուր է պատում , որ կոտարածն ոկտել է : Երբեմն ականջիս են համում խուլ , բայց յաճախ կրկնող հրացանաձգութեան ձայներ :

Զըգիտեմ ե՞ր էր—այլես ժամանակը գոյութիւն չուներ մեզ համար—եկեղեցի մտաւ մի երիտասար : Նա էր որ պատմեց , թէ պահակ զինուորները սպանել են վահանին : Սպանող թուրքին տարել են պալատ և այն տեղ յալունել , որ սպանուած մահմետականին խլել են ապստամբք գետաւների ձեռքից : Մահմետականիւն այդ ժամանակ ամեն կողմից սկսում են դռուալ :

— Մահ գեաւուներին :

Եւ շուկայի վրա էին յարձակւել :

Մենք որ գիշերն ամբողջ անցկացրինք եկեղեցու մէջ , մօտ 3—400 հոգի , անօթի , անծածկոց , վախից կիսամեռ , գրեթէ անդէն—առաւոտեան միայն խոնցանք , որ շուկան կատարելապէս թալանել են :

Գրեթէ ոչ ոք չաղաղակեց : Մեռելային դունատութիւն պատեց բոլորին : Կթուեցին ոտքեր և շատերն ըսկուցին ծնկերը ծեծելով՝ լալ :

Լս ում էին հառաջներ միայն : Տեսնուում էին կոյտկոյտ , փոթորկեց ջարդւած հօտի պէս միմիանց կոթնած ,

դեմի վրա փառած . անկիւններում կծկւած , անհպատակ թափառող , անկիւ հայացքայ նայող ծերեր , մանակներ , կանոցք . . .

II

Կէսօրն անցել է :

Մեղնից շատերին յաջողւեց տոն գնակ , պաշար ու ծածկոց բերել :

Գաղաքում տիրում է մի մեռելային ծանր , ճնշող լուսթիւն : Անցուդարձ գրեթէ չիկա : Շատերը գեռ մը նում են իրանց տների մատաներում թագնած , ուժ խորշերում պահւած :

Միքանիսը յայս են տածում որ զտան գն անցել է , որ փաթսիկը մերջացել է :

Բայց խորին լուսթիւնը աւել սաբուփ է ապդում : Այդ լուսթիւնը՝ փշրող փոխորիկի նոտիւննեցն էր :

Այդպէս է լինում մի բապէ , երբ հետեւում է կործանիչ հեղեղը , աւերիչ ուրագանը : Այդպէս է լինում այն բռաբէն , որից յետո աւապերը որոսնդոստ գոռում են և կայծակը հրային գծերով պատռումէր օդը , ոսկեդոյն ալիներ է ցրում եթերի մէջ . . .

Այդպէս է լինում այն բապէին , որից յետո ճրագը բռցափայլում է ու հանդում , մը ունողն ազազակում է և յաւիտեան ննջում . . .

Եւ արդարեւ մի խուլ դզրդոց , կոհակածե ցնցեց օդն ու խոժեց գէպի մեզ : Մի ազմուկ , որ գորս դաշլով հազարաւոր օռնացողների կոկրդից , անցիս եր փաղոցներ , գողացնում տնեն ինչ , շարժում ծառեր , ցնցում գետինը . . . Մի յարատե գայլային օռնոց միշտ մեծացող , հետղնետէ մօտեցազ :

Լուսում էին նաև թմբուկների ձայն եր : Դայ ծես քաղաքից դորս բանուկուծ զնչուները իրենց թմբուկներով պար էին սոլք' գուղաքի հրապարակում :

Եւ գրան հետեւում էին փշրուղ , չարգուող գուների ձայներ , կացինների թնդիւն , տների մէջ մորթւողների սոր , աղելսարշ ու կծւոթեամբն օդը քեզբանդ ձէշեր , թալանողների յազթական , խռովու կանչեր . . .

Գայլուն էին :

Մի բողէ ոչ օք մեղմնից չըկարազացաւ մի բան արտասանել : Դագարեց տմեն հառաչ , տմեն ողբ :

Առքի թռան բողորը՝ զաղանակաւոր դործիքի պէս սատնելով լարւեցին ջղեր , ակնապիշ քարացան հայեացքներ . . .

Յետո , մ'հ , յետո . . . Մի խառնուշփոթ , մ' ժիար . . .

— Տղերք , գայլուն են , յուեց յանկարծ մի երիտասարդ դի աժդին ձայն , միթէ թողնելու ենք որ ոչխարի պէս մորթեն մեզ :

— Մեռնենք քաջերէ նման . . . ձայնեց մի որիշը :

— Զէնք , զէնք . . .

— Դորս յարձակւենք . . .

Եւ ոշինչ չէր որոշում :

Առաձին ձայն տուղը բակ դորս եկաւ . բաղեապէս բորբս կիտաեցինք նրա շուրջը՝ մեր զէնքերը զնեցինք , յետո խմբերի բաժանեցանք և դաշու թռանք բակից :

Ամեն կողմից համառւմ էին նոր փախատականեր և բարեբախտաբար՝ զին ած :

— Մինչև վերջին շոնչը , տղերք . . . գոչոց գլխաւորը :

— Ահձնատոր ըլինք , սոսած մի ուլչը , միւնդինն է , մեղ ողջ չեն թողնիլ ոչ մի հանգանանքում :

Ահա և խոժանի , յարձակւող գայլերի ձայրը :

Ա՞նչ խուժան :

Առջեկց ու մէջտեղից երեսում էին զինոպնիք, բայց անկանոն կանգնած . քիւրդ ու թաւը ամեսխը զինած եր ամեն տեսակ զէնքով :

Աղաղակում էին, որքան ձայն ունէին . և կանայք, թմբուկներ ձեռքերին՝ ալար էին բռնել, ուստասում ու գրգռում իրենց վայրենի ամսովներին . . .

Զարհուրելի՛ էր . երբէք այդպիսի կատավի, գողանային ամբոխ չեւ կարող երեւակյել :

Քայլում էին միշտ օռնալով, հանդիպածին՝ տաղալում, մորթում : Եթէ տուն էր, գտուը ջարդում կացինի հարսածներով, ներս էին խուժում, մի բոպէի մէջ առնը մերկացնում, քանդում, աւերակ գարճում ու անցնում . . .

Կարծե՛ս մարեխները լինէին, որ մի անդամ իչնելով ամբողջ արտեր են ոչնչացնում :

Աակայն մեր գտակները կանգնեցրին նրանց .

Բոլորս միասին կրակ տեղացինք նրանց վրա :

Զին որ երր փորձեցին խմբել, պատասխանել մեզ, բայց խոռնեցին կատավի խո ժանի յախթական օռնոցը փախեց ճիշերի . թմբուկները ընկան, կանայք ետ փախան, հրեցին, հրաշտկեցին, ու մի խառնիճաղաղնձ, զզւելի խառնուրդով ցրեցին . . .

Ա.յ՛, բարեկամ, ցրեցինք 10000-ից աւելի մի խոժանի, որ մեր արիւնն էր ուզում, մեր ինչըլ, մեր պատրւը : Ցրեցինք մեր չնչին զէնքերով :

Ա.հ, եթէ աւելին ունենայինք . . .

Քաջ ընկերներս . . . : Պէտք էր տեսնել թէ ինչպէս սիրո առած մտան աների մէջ, լուսումուներից կրակ ու ամեն ինչ սկսեցին տեղալ գայլերի վրա, ջարդել ու փշել, հակածել ու ցրել : Ես էլ էի կրակում, անդադար

Հրացանում, և ո՛չ մինը չէր վրիպում, ո՛չ մինը : Բայց ինչ կարող ենք անել մեր այս խղճալի զէնքերով, գնդակների ու վառօղի չնչին պաշարով, եթէ ո՛չ միայն աւելացնել արիւնաբբուներու կատաղութիւնը :

Եւ չի անցնել մի օր, գուցէ մի քանի ժամ, ու կըգան նրանք զինած պետութեան աւած զէնքերով, կըգա զինուրական ոյժ թհնդանօթներով, ու մեզ կապանեն, մեղնից մինչև յետինը կր մորթեն . . .

Չըդիտեմ այլեւ, թէ քանի ժամ կեանք ունի՞մ . . .

### III

#### Դեռ ապրում եմ :

Ապրել ես գու այսովէս, բարեկամ, կանդնած ծխացող, արիւնաշաղախ աւերակների կողափ, հառաջող վերքերի մէջ առաւարդ, տապակուզող աղղականերիդ, ծնողներիդ, բարեկամներիդ, գիւղների, փառ տների, սարսափեց առջած, վախից՝ քրքիջ արծակող կանանց, իրենց կորցրած, երեխակի պէս լացող, հեկեկող աղամարդերի մէջտեղ . . .

Ապրել ես գու երբէք այսպէս՝ կանդնած մի քանի խումբ գունաթափափ բայց անյոզգոզդ երիտասարդների հետ, ողի ի բոխն, զիստագից ու ողտարասու մեռնելու, զոհելու իրենց կեանքը . . .

Եւ առ լում են ահա գլխիս չորս կողմից թշնամու արձակած գնդակները, ականջո խղացնում են շրջապատիս շիսմն ու լացը, թշնամու օռնացն ու հայհոյանքը :

Առաջին ժամին կորցրել էին ինձ : Հրացան պարզըւում էր անօդաւ կամ առանց նպատակի, նայում էր առանց առանելու, լուսմ էի՝ առանց զնելու :

Ոչինչ չեի հասկանումք Տեսնում էի, որ շրջապատռում  
ընկնում էին ծանօթներու ու բարեկամներու և գալարւում,  
տանջուում Գիմացից նոյնալեռ:

Մի վարկեան, ձայների զագարւան և տիրող կար-  
ճառե լուսթեան Շէջ, ականջիս հասան վիրաւորեալների  
հառաջներ . . . ապա՝ հեռաւոր, անթիւ ամբախի ունաց-  
նորը և գետի տիսուր միատեսակ խշոյը . . .

Առաջին ժամից յետո սակայն, մի տհամկ սթափւան  
մէջ գտա ինձ: Եւ ականջ դրի:

— Տղերք, քո՞յ եղեք . . . հասկացա մեր գրիստորի  
որսացող ձայնը կրակեցէք, ողջողջ անձնատոր չըլինիք. .

Եւ պայմանում են հրացաններ, կրակ ժամքումք Տաք  
ծուխը ծածկում է մի բալէ ամեն ինչ, յետո ցրումք է  
հետզհետէ նորից երեց ու ուտեցող զինողների ախների  
շարքը:

Զինողներ են, ոյս, շարքով կանգնած, լեցնում են  
հրացանները, միասին բարձրացնում . . . թնդում է ապա-  
մի առեղ ձայն և մեր դաների ու լուսամատների վրա ցըն-  
ցումներ են աեզի անենում, փշրուծքներ, ահապին ճեղ-  
քածներ լաւում են ճիշեր, ազաղակներ . . .

Առ ո՞րքան տեսեց այդ—չրգիտեմ:

Յանկարծ եկող զինողների շարքը կանգ է առնում.  
իր ետեից լուսմ են երի օսնոցներ, երեսն է գալիս  
թուրք ամրուսը կատաղի, գորս եկած թարանած տներից.  
Քաշ է տալիւր իր հետ տաերիք, հադնելիք դորգ, վեր-  
մակ . . . աղջիկներ, ծերութիւններ, մայրեր . . .

Ահա, մշոշի պէս աչքիս տունի են զալիս ուշաթափ,  
ուոզիրը ցլաւծ մասահաս աղջիկ ու կանալք, վայրադ-  
քիւրդերի բազուկներէ մէջ ու շամժափ ծերութիւնների արե-  
զարդ գլուխները, որոնք խեղդւած զաղան թուրքերի

թեւրով՝ քարչ են տայխ իրենց մալմինը փողոցի փոշու-  
մէջ և մանուկներ, որոնք ճշում են, իրենց թաթիկները  
պարզում:

Մայրեկ, մայրիկ . . .

Եւ ոչինչ չեմ տեսնում:

Հրացաննածգութիւնը գաղարել է . ընդհանուր քարա-  
ցում է ափրել. թշնամին յառաջանում է գեղի մեզ:

Մեր ծնողները, մեր կանայք ու մանուկները նրանց  
տունեից քշւում են և մեր ինքնապաշտապետթեան համար  
արձակող հրացանների առաջը բերուում:

Ահ վասիրը . . . Սախալում են մեզ մեր ձեռքախն ըս-  
պանել մեր քոյլերին, մեր մայրերին ու զաւակներին:

Զինքերնիս յած են իշնում, բազուկնիս թուրանում:  
Բայց ահա գլխաւորը, որ յանկարծ ցյում է իր եր-  
կար, խրսխս հասակը և գունաթափ՝ ձայնում:

— Տղերք, այդ ինչ է, վարանում էք. չէ որ եթէ  
կենգանի մեան գլխաք, միւնայնն է զոհ են գնալու այդ  
գաղանենիր կրքերին և արերին . . . Յառաջ, կրակեցէք,  
թող մեանեն գոնէ պատւողը մահով . . .

Առ բարձրացրեց հրացանը, նշան արտա, կրակեց . . .

Մի ծեր կին էք, որ գնդակն առնա, շարժեց ձեռ-  
քերը, նայեց իր զարկոզին և մեռառան:

Մայրն էք:

Գաղանները սարսափահար՝ կանգնառն. բնազդ-  
մամբ իմացան, որ որդին մօրը սպանեց:

Այդ հակայական սպանութեան առաջ՝ ապշեցին նը-  
րանք, վախեցան, սկսեցին ետ քաշւել:

Բայց երկար ըլտեւեց այդ:

Անշաշտ շատ չեն կարող լինել այդպիսի անսիրտնե-

— մտածում էին նրանք:

Բայց սխալում էին :

Բոլորս բարձրացրինք հրացաններու :

Մերունի կինը, ընկած փոշու մէջ, մեր դրօշն էր դաձել  
— կրակ . . . որտաց գիխաւորը խռպու ձայնով —  
մայրս էր, որ սպանեցի . . . կրակ, թող մեռնեն բոլորն էլ .  
Աւ գոնաթափ էր՝ որպէս մահ :

Ահա այդ բոպէին էր, որ աչքս յանկարծ ընկաւ մի  
քիւրդի բազուկների վրա քարշ եկող կնոջ գէմքին :  
Կինս էր :

Բարձրացրել էի հրացանս . ետ չըքաշեցի . աչքերս մի-  
այն փակեցի և կրակեցի :

Աւ երբ բացի, կինս ընկած էր և քիւրդը թաւալում  
էր նրակողքին :

Շատ հեռու չէին . ինքնամոռացու թեան մի բոպէի մէջ  
դուրս նետուեցի, երկու սատինով հաւաս, խլեցի կնոջս  
գիտկը, բարձրացրի և ետ եկա :

Աչ ոք չի տպաւ ինձ :

Մեռել էր ։ Գնդակս ծակել էր գւախը և աչքերը առո-  
կումով ինձ էին նայում :

Յած դրի պառաւ մօրս կողքին :

— Հարսդ է, մայրիկ . ես սպանեցի . . .


Աւ միացա խմբին :

Հրացանում ենք ։ Շուտով՝ սրերի կը դիմենք . . .

Ո՞վ մեզանից արդեօք կենդանի սիսի մեա . . .

Մնաք բարեւ, ատահովութեան մէջ ապրող բարեկամներ  
Մեռնողները բարեւում են ձեզ ! . . .

Վ. Փափազեան




	272	4
1. ՄԱԼԻՈ. — ԵԵԲՈ. ՍՈՎԻ. ԵՔ ԻՐ ՊԱՏԱՌԱՅԵՐՔ 4.	—	—
2. ԱԱՀՐՈՒՑ. — ԿՈՆՈՒԴ. ՍՊԱԾՈՎՈՒԿՈՒՆ ԲԵԿ. —	20	—
3. Վ. ՓԱՖՈԶՅԱՆ. — ՊԱՏԿԵՐՆԵՐ	1	—

*Եռասով լոյս կը ժամէ*

### ՄԱԼԻԱԾԻ

ՅԵՂՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԵՂՈՎՈՒԹՈՒԿՈՒՆ ԿԵԱՆՔՆԵՐ

Կը պատրաստամին ու բիշ աշխատամիլիներ



ԳԻՒՆ Է 1 ՀՐԸ.



891.99  
qp-31



60035